**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ**

---

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի,1փ 19շ 71-5-10

Թիվ 18/52
,, 11 ,, ապրիլի 2018թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ՝

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի ղեկավարի կողմից 2018թվականի ապրիլ ամսվա 1-10-ը ընդունված որոշումները

Առդիր «3» թերթից:

Համայնքի ղեկավար՝ Ռ.Մարգարյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի,1փ 19շ 71-510

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«10» ապրիլի 2018 թվականի N 30-Ա

## ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ 8 ՓՈՂՈՑ ԹԻՎ 51 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ԳԱՅԱՆԵ ՖԼՈՐԻԶԱՅԻ ԱՍԱՏՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒՓՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Գայանե Ֆլորիզայի Ասատրյանի՝ գ.Արմավիր 8 փողոց թիվ 51 հասցեում գտնվող,տնամերձ հողամասի նկատմամբ, սեփականության իրավունքները ճանաչելու վերաբերյալ դիմումը;.

Հաշվի առնելով,որ հողամասը համապատասխանում է հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում,ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով ՀՀ կառավարության 18.05.2006թ թիվ 912-Ն որոշման կարգով սահմանված և սույն որոշման 22-րդ կետի 1-ին ենթակետով. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

1.Հաշվի առնելով որ գույքը բավարարում է «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված պայմաններին``ճանաչել քաղաքացի՝ Գայանե Ֆլորիզայի Ասատրյանի /ծնված 09.05.1968թ-ին/ գույքային իրավունքները՝ճանաչելով նրա սեփականության իրավունքը Արմավիրի մարզ գյուղ Արմավիր 8 փողոց թիվ 51 հասցեում գտնվող 1200 քառ/մ օրինական հողամասի նկատմամբ.

2. Հողամասին կից 91 քառ/մ ավել զբաղեցրած հողամասը հատկացնել անհատույց սեփականության իրավունքով;

3.Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանմանը գրանցել քաղաքացի Գայանե Ֆլորիզայի Ասատրյանի՝ սեփականության իրավունքը և տրամադրել անշարժ գույքի սեփականության վկայական.

.5..Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ռ.Ֆ.Մարգարյան

2018 թվականի ապրիլի 10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի,հեռ 192 71-510

# ՈՐՈՇՈՒՄ

« 07 » ապրիլի 2018 թվականի N 29-Ա

## ՏՆԱՄԵՐՁԻ ՀԱՍՑԵԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրանց գտնվելու և /կամ/տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման միասնական մարմին սահմանելու մասին» N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006թվականի օգոստոսի 20-ի «Համայնքային ենթակայության փողոցների վերանվանման մասին» թիվ 2 որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի քաղաքացի՝ Գայանե Ֆլորիզայի Սաարյանին պատկանող տնամերձ հողամասին /ծածկագիր 04-020-0015-0005 / տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի 8 փողոց թիվ 81 հողամաս.

2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի մարզերի միավորված ստորաբաժանում;

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ռ.Տ.Մարգարյան

2018 թվականի ապրիլի 07
գ.Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի,1փ 19շ 71-510

# Ո Ր Ո Շ Ու Մ

«04» ապրիլի 2018 թվականի N 28-Ա

## ԿԱՊԻ ՀԱՆԳՈՒՅՑԻ ՇԵՆՔԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի-N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006թվականի օգոստոսի 20-ի թիվ 2 որոշումը.

## Ո Ր Ո Շ Ու Մ ԵՄ՝

1 Քանի որ, գույքը բաժանվում է ,, Վեոն Արմենիա,, ՓԲԸ-ին պատկանող. Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի կապի հանգույցի առանձնացվող մասին՝ 112.5 ք.մ /ծածկագիր 04-020-051-/ տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի 1 փողոց թիվ 25 շենք ;

2.Մնացորդային մասին 54.0ք.մ / ծածկագիր 04-020-051-/ տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի 1 փողոց թիվ 25 /4 շենք ;

3.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի մարզերի միավորված ստորաբաժանում՝պետական գրանցման համար.

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Ռ.Ֆ.Մարգարյան

2018 թվականի ապրիլի 04
Գ.Արմավիր